ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 44

«25» 09 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ, ՆՐԱ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 28 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանը, ելնելով Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, աշխատանքի հավասարաչափ բաժանում և ծանրաբեռնվածություն ապահովելու անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազների միջև աշխատանքի հետևյալ բաժանումը.

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը՝

ա. իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության ընդհանուր ղեկավարումը և վերահսկողությունը,

բ. սահմանում է Հայաստանի Հանրապետության դատախազության լիազորությունների իրականացման ուղղությունները,

գ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության աշխատանքները,

դ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում

մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքները,

ե. ղեկավարում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականների (այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության հարցերով խորհրդականի) և օգնականների աշխատանքները,

զ. ղեկավարում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր ստեղծված խորհուրդների, աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքները,

է. կառավարում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի, նրա տեղակալների և Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները:

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Հարությունյանը՝

ա. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

բ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքները, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտը,

գ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

դ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

ե. համակարգում է Արդարադատության ակադեմիայի՝ Հայաստանի Հանրապետության դատախազությանն առնչվող աշխատանքները,

զ. համակարգում է քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող հարցերը:

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Հայկ Ասլանյանը՝

ա. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

բ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության աշխատանքները, ինչպես նաև պետական շահերի պաշտպանության ոլորտը,

գ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի:

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը՝

ա. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության աշխատանքները, ինչպես նաև միջազգային-իրավական համագործակցության ոլորտը,

բ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 28-րդ գլխում նախատեսված հանցագործություններով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում քննվող գործերի,

գ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

դ. ղեկավարում և համակարգում է Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի ու գլխավոր խմբագրի աշխատանքները:

5) **Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Վահե Հարությունյանը** ղեկավարում և համակարգում է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության աշխատանքները:

6) **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Կարեն Կարապետյանը՝**

ա. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հանձնարարված հասարակական հնչեղություն ունեցող, բարդ և բազմադրվագ քրեական գործերով իրականացնում է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանություն և դրանով պայմանավորված՝ դատական ակտերի բողոքարկում,

բ. ստուգում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության շտաբի տեսչական վարչության հետաքննության և տեսչական ստուգումների բաժինների, կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր և քրեական հետախուզության գլխավոր վարչությունների կողմից՝ կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարման վիճակը, ինչպես նաև հսկողություն է իրականացնում կատարվող հետաքննության նկատմամբ:

7) **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Արմեն Նիկողոսյանը՝**

ա. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հանձնարարված կոռուպցիոն բնույթի հասարակական հնչեղություն ունեցող, բարդ և բազմադրվագ քրեական գործերով իրականացնում է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանություն և դրանով պայմանավորված՝ դատական ակտերի բողոքարկում,

բ. ուսումնասիրում և ամփոփում է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ համապատասխան կառույցներից ստացված տվյալները, պատրաստում և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին է ներկայացնում նշված ոլորտում առաջադրված հարցադրումների վերաբերյալ պատասխանների նախագծերը,

գ. համակարգում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ կապված Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատանքները, ապահովում է ազդարարման համակարգի ոլորտում դատախազության գործառույթների իրականացումը:

8) **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Գայանե Գասպարյանը՝**

ա. համակարգում է անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությանն առնչվող աշխատանքները,

բ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հանձնարարված հասարակական հնչեղություն ունեցող, բարդ և բազմադրվագ քրեական գործերով իրականացնում է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, ինչպես

նաև մեղադրանքի պաշտպանություն և դրանով պայմանավորված՝ դատական ակտերի բողոքարկում,

գ. ապահովում է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության ոլորտում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի վերահսկողական լիազորությունների իրականացումը:

9) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Վաղինակ Ջանազյանը՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հանձնարարված հասարակական հնչեղություն ունեցող, բարդ և բազմադրվագ քրեական գործերով իրականացնում է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանություն և դրանով պայմանավորված՝ դատական ակտերի բողոքարկում:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի հոկտեմբերի 29-ի N 85 և 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 97 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 28 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ